*Հավելված*
*ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/77 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*2026 թվականի սեպտեմբերի 25-ի N 1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 25-ի N 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/77

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/77 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ** N 1: Ընթացակարգի հրավերով ներկայացված 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն**: Ընթացակարգի հրավերով ներկայացված 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել առաջարկվող ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագիրը ներկայացնել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«32 հեռախոսահամարի համար բջջային հեռախոսակապի ծառայություններ, որը հնարավորություն կտա փաթեթի ներսում զանգեր անվճար, տեղական բոլոր այլ ցանցեր այդ թվում նաև ԱՄՆ, Կանադա անվճար առնվազն 1000 րոպե բջջային ինտերնետ 3G/4G/5G առնվազն 20GB SMS դեպի ՀՀ բոլոր ցանցեր առնվազն 1000 SMS Անվճար, Զանգեր դեպի ՀՀ բոլոր ցանցեր ոչ ավել քանի 12 դրամ՝ SMS դեպի տեղական բոլոր բջջային ցանցեր, SMS դեպի միջազգային ցանցեր 20 դր/SMS: Բաժանորդի ցանկությամբ ՀՀ այլ ցանցերում գործող հեռախոսահամարների տեղափոխում տվյալ ցանց առանց համարի և կոդի փոփոխության: Ծառայությունը մատուցվում է ընդհանուր 32 հեռախոսահամարի համար: Հեռախոսահամարը պետք է կարողանա ստանալ և ուղարկել ինչպես զանգեր, այնպես էլ SMS հաղորդագրություններ: Մատակարարը պետք է տրամադրի հաճախորդների աջակցման ծառայություն ողջ օգտագործման ժամկետում: Անհատական կորպորատիվ մասնագետի կողմից սպասարկում: Յուրաքանչյուր համարի վերաբերյալ մանրամասն հաշվետվության տրամադրում ըստ պատվիրատուի պահանջի: Անհրաժեշտ պայման է ԲԿԳԿ-ի համարների տեղափոխումը և սպասարկումը մատակարար բջջային օպերատորի կողմից՝ առանց հեռախոսահամարների փոփոխության: Պարտադիր պայման՝ քարտերի վերաթողարկումը և նոր համարների տրամադրումը կատարվում է օպերատորի կողմից անվճար: Այլ պայմաններ - Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը Ծառայությունը և Կատարողը սահմանում են, որ իրենց միջև կնքվող պայմանագրի (համաձայնագրի) պայմանները կիրառվում են 2027 թվականից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի: Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման:»:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հայրապետյանին:

Հեռախոսահամար՝ +374 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե